# ԸՆՏՐՎԵՑ ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻԱՅԻ ՆՈՐ ՊԱՏՐԻԱՐՔԸ

Մոսկվայի և Համայն Ռուսիայի Պատրիարք Կիրիլը (աշխարհական անվամբ Վլադիմիր Միխայլովիչ Գունդյան) ծնվել է 1946 թ. նոյեմբերի 20-ին Լենինգրադում:



Դպրոցն ավարտելով՝ աշխատել է Լենինգրադի մարզի երկրաբանական արշավախմբերում:

1965 թ. ընդունվել է Լենինգրադի հոգևոր սեմինարիան, այնուհետև Լենինգրադի հոգևոր ակադեմիան, որը գերազանցությամբ ավարտել է 1970 թ.:

1969 թ. հունիսի 1-ին ձեռնադրվել է կուսակրոն հոգևորական՝ ստանալով Կիրիլ անունը:

1970-71 թթ. դոգմատիկ աստվածաբանություն է դասավանդել Լենինգրադի սեմինարիայում՝ միաժամանակ կատարելով Լենինգրադի միտրոպոլիտ Նիկոդիմի անձնական քարտուղարի պարտականությունը:

1971 թ. սեպտեմբերի 12-ին ստացել է վարդապետական աստիճան:

1971-74 թթ. Եկեղեցիների Համաշխարհային խորհրդում ներկայացրել է Մոսկվայի պատրիարքությունը:

1976 թ. մարտի 14-ին ձեռնադրվել է եպիսկոպոս:

1977 թ. դեկտեմբերի 26-ից 1984 թ. դեկտեմբերի 26-ը եղել է Լենինգրադի հոգևոր ակադեմիայի և սեմինարիայի ռեկտորը:

1977 թ. սեպտեմբերի 2-ին ստացել է արքեպիսկոպոսության աստիճան:

1984 թ. դեկտեմբերի 26-ին դարձել է Սմոլենսկի և Վյազեմսկիի արքեպիսկոպոս:

1986 թ. դարձել է Կալինինգրադի մարզի հոգևոր համայնքների պատասխանատու:

1988 թ. դարձել է Սմոլենսկի և Կալինինգրադի արքեպիսկոպոս:

1989 թ. նոյեմբերից նշանակվում է Մոսկվայի պատրիարքարանի արտաքին հարաբերությունների բաժնի վարիչ և ընտրվում Ս. Սինոդի անդամ:

1991 թ. փետրվարի 25-ին ստանում է միտրոպոլիտության աստիճան:

2009 թ. հունվարի 27-ին ընտրվել է Մոսկվայի և Համայն Ռուսիայի Պատրիարք: